

Ծնող-երեխա բացասական հարաբերությունների պատճառները և դրանց հաղթահարման միջոցները սոցիալական մանկավարժի աշխատանքում

Բեժանյան Սեդա

Հանգուցային բառեր. նույնականացում, ինքնավստահություն, հակասոցիալականացնող ազդեցություն, անբարենպաստություն, հակամարտություն, հոգեկան մերձեցում

Ընտանիքը այն առաջին միջավայրն է, ուր մարդը պիտի սովորի բարիք գործել: Վ. Մուխամյանսկի

Ընտանիքը՝ որպես մարդկանց կայուն սոցիալական հանրություն, ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է և կատարում է կարևոր դեր. ապահովում է բնակչության աճը: Դրա յուրահատկությունն այն է, որ ընտանիքում անդամներն ամենասերտ փոխազդեցությամբ են կապված միմյանց հետ: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի:

Մինչև վերջերս ընտանիքի ուսումնասիրությամբ զբաղվում էր բացառապես միայն սոցիոլոգիան. ստեղծվել էին ընտանիքի տեսական հայեցակարգեր սոցիալականացման գործառնությունների, հասարակության այլ ինստիտուտների հետ կապերի տեսանկյունից: Սակայն վերջին ժամանակներում ընտանեկան գործառնության վերաբերյալ խնդիրների նկատմամբ մեծ հետաքրքրություն է նկատվում տարբեր գիտաճյուղերի կողմից՝ սոցիալական մանկավարժության, հոգեբուժության, ազգագրության և այլն: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ, ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, ընտանիքի դասական ինստիտուտը ճգնաժամ է ապրում համայն աշխարհում՝ կապված ամուսնական, ընտանեկան հարաբերությունների բովանդակության փոփոխման հետ, իսկ այն երկրներում, որտեղ սոցիալ-տնտեսական անկում է, ընտանիքի ճգնաժամը կրում է սպառնացող բնույթ: Այսօր ընտանիքի նոր ձևեր գտնելու ուղիներ են որոնվում, որոնք ավելի լավ կհամապատասխանեն հարաբերությունների ժամանակակից բովանդակությանը:

Կարևոր են ընտանիքում ծնող – երեխա դրական հարաբերությունների կառուցման, ծնողների հոգատարության, նրանց վերաբերմունքի և ուշադրության հարցերը: Երեխաների հետ կապված խնդիրները շատ տարբեր և բազմազան են, իսկ նրանց դաստիարակության հարցերը՝ մեծաքանակ ու ծավալուն:

Ընտանիքում գերակա հարցը ծնող – երեխա հարաբերությունների խնդիրն է: Երեխայի ապահարմարվողականության տեսակների բացահայտումը բերում է այն եզրահանգման, որ պատճառը ընտանեկան դաստիարակության ոչ ճիշտ իրականացման, ծնող – երեխա բացասական հարաբերությունների մեջ է:

Ընտանիքում առաջացած հակասությունները հարթելու համար ծնողները

հաճախ դիմում են սոցիալական մանկավարժների, հոգեբանների խորհրդատվությանը: Առողջ ընտանիքում ծնողները կապված են ամենօրյա բնական շփումներով, որի արդյունքում ծնվում է հոգեկան մերձեցում, ազգակցական կապերն ավելի են ամրապնդվում, ավելի վառ են դառնում հայրական և մայրական զգացմունքները:

Ծնողները և երեխաներն ունեն փոխադարձ հաղորդակցման պահանջ, ինչը, կախված տարիքային առանձնահատկություններից, տարբեր կերպ է դրսևորվում: Ծնողների և երեխաների միջև տարիների ընթացքում ձևավորվում են փոխհարաբերությունների որոշակի տարբերակներ:

Օրինակ՝ դեռահասները ձգտում են ինքնահաստատման, պատանիները՝ ինքնադրսևորման: Եթե նրանք ծնողների հետ հասնում են փոխըմբռնման, ապա ձգտում են ակտիվ մասնակցել ընտանիքի կյանքին, թեթևացնել ծնողների հոգսերը և այլն:

Ծնողների սերն ու քնքշանքը երեխայի զարգացման համար կարևոր նախապայմաններ են: Կան ծնողներ, որոնք, իրենց փոքրիկներին անհասկացող և պարզունակ էակներ համարելով, հաշվի չեն առնում երեխաների հոգեկան առանձնահատկությունները: Երբ երեխան իրեն մենակ ու լքված է զգում, նրա մեջ չեն զարգանում անձի հոգեկան հասունության հիմնական կարևոր հատկանիշները՝ ինքնավստահությունն ու հավատը: Ծնողները պետք է իմանան, որ երեխան սիրել սովորում է իր ծնողներից:

Ծնողների կողմից չափից ավել ցուցաբերվող խնամքը և հոգատարությունը վանում է երեխաներին, ավելորդ հսկողությունից ազատվելու համար նրանք ձգտում են դեպի փողոց: Որպեսզի երեխայի շփման օղակը չսեղմվի, անհրաժեշտ է նրան անընդհատ ոգևորել, պահպանել կապը հարազատների հետ: Երեխային չի կարելի մեկուսացնել միջավայրից: Երեխան ինքը պետք է բացահայտի իր ներաշխարհը, անհատականությունը: Նա պետք է ձեռք բերի ինքնուրույնություն իր տարիքին և հնարավորություններին համապատասխան: Այն երեխաները, որոնք ընտանիքում չեն ստանում բավարար ջերմություն, սեր, հոգատարություն, նվաստացման զգացումներ են ունենում, ենթարկվում են բռնության, սկսում են իրենք պաշտպանել իրենց իրավունքները սեփական ձևով, որոնք հաճախ անօրինական են, որն էլ բերում է տնից փախուստի, վարքագծի դևիանտ ձևերի դրսևորմանը: Այս ամենն արտահայտվում է երեխաների վարքագծում, որոնք վտանգավոր են դառնում հասարակության համար: Այս երևույթը կանխելու համար անհրաժեշտ է ժամանակին ցուցաբերել օգնություն՝ կիրառելով մասնագիտական աշխատանքի ժամանակակից մեթոդներ:

Այսօր կարևոր խնդիր է սոցիալապես անապահով ընտանիքների աջակցության ճիշտ կազմակերպումը՝ հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները և այնտեղ տիրող մթնոլորտը: Շատ հաճախ նմանատիպ ընտանիքների հետ աշխատող մասնագետները կանգնում են դժվարությունների առջև՝ չիմանալով, թե օգնության ինչ ձև է անհրաժեշտ նրանց՝ տնտեսական, բժշկական, սոցիալական, մանկավարժական, հոգեբանական, թե միանգամայն այլ բնույթի և տիպի:

«Ծնողի վարքն օրինակ է երեխայի համար: Չմոռանանք, որ դրոշակի տարիքում (6-10 տարեկան) երեխան նույնականացվում է մինևույն սեռի ծնողի հետ» [1, 58]:

Սա նշանակում է, որ երեխան որդեգրում է ծնողի մոտեցումները, մտքերը՝ նմանվելով նրան: Ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ծնողն ունի մեծ պատասխանատվություն երեխայի անձի ձևավորման համար, և ճիշտ իրականացնելով դաստիարակության գործընթացը՝ մենք կունենանք բավականին լուրջ և նկատելի առաջընթաց հասարակության զարգացման բնագավառում, ինչն էլ կհանգեցնի հետագա նվաճումների:

Փորձենք ներկայացնել երեխա-ծնող բացասական փոխհարաբերությունում իրականացվող միջոցառումների համակարգային հիմնավորումներ, որոնք ուղղված են ընտանեկան դաստիարակության գործում սխալների, ինչպես նաև երեխա – ծնող բացասական փոխհարաբերությունների կարգավորման գործընթացի կազմակերպմանը:

Ապագա հայրերն ու մայրերը դեռ դպրոցից պետք է պատկերացում ունենան ընտանեկան կյանքի և դրա խնդիրների մասին: Միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում սովորող յուրաքանչյուր պատանի կամ աղջիկ արդեն խորհում է իր ապագա ընտանիքի մասին: Նրանք իրենց հնարավորության սահմաններում փորձում են գնահատել իրենց ընտանիքում գոյություն ունեցող փոխհարաբերությունները: Ամեն ոք պետք է իրազեկ լինի ընտանիքի, ընտանեկան կյանքի հոգեբանական հիմնահարցերին: Ժողովրդական ասույթն ասում է. «Ընտանիքը դաստիարակության ամենամեծ համալսարանն է»:

«Ընտանիքը սոցիալական ինստիտուտ է, որը բավարարում է հասարակության պահանջումները՝ սերնդի վերարտադրության, ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման, մշակութային հարստության և ժառանգության փոխանցման տեսանկյունից: Ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է» [5, 158]:

Դաստիարակելով երեխաներին՝ ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագան, իսկ դա նշանակում է՝ նաև ամբողջ աշխարհի պատմությունը /Ա.Ս. Մակարենկո/:

Կախված ընտանիքներում տիրող հարաբերություններից՝ ընտանիքները կարելի է բաժանել 5 խմբերի.

1. Ընտանիքներ, որտեղ ծնողների և երեխաների միջև տիրում են շատ ջերմ, ընկերական հարաբերություններ:
2. Ընտանիքներ, որտեղ տիրում է բարիդրացիական մթնոլորտ:
3. Ընտանիքներ, որտեղ ծնողները մեծ ուշադրություն են դարձնում երեխաների ուսմանը, նրանց կենցաղին ու սահմանափակվում սրանով:
4. Ընտանիքներ, որոնցում երեխայի քայլերը գաղտնի վերահսկվում են:
5. Ընտանիքներ, որտեղ երեխա – ծնող հարաբերությունները կոնֆլիկտային են:

«Նման ընտանիքները դասվում են ցածր կազմակերպվածություն ունեցող

ընտանիքների թվին, որոնք չունեն ճգնաժամային իրավիճակները ինքնուրույն լուծելու նախաձեռնություն» [3, 116]:

Այս է պատճառը, որ նրանք ավելի շատ են զգում սոցիալական օժանդակության կարիք:

«Ընտանիքները կարող են լինել ֆունկցիոնալ ունակ և ֆունկցիոնալ ոչ ունակ («ռիսկի խումբ»)» [2, 96]:

Ակնհայտ է, որ այսպիսի ընտանիքների երեխաները կարիք են զգում սոցիալական պաշտպանության և երեխայի դիրքը այդ ընտանիքում շատ բանով կախված է սովյալ ընտանիքում տիրող իրավիճակից: Եթե երեխան զգում է ծնողների սերը, իր հանդեպ ուշադրությունը, ապա անցումային շրջանը անցնում է առանց ընդվզումների: Իսկ եթե երեխան լքված է, միայնակ, ապա նա դառնում է ագրեսիվ, եսասեր: Այն խնդիրները, որոնք անհանգստացնում են երեխային, ծնողի համար աննշան, անցած-մոռացված բաներ են: Օրինակ՝ պատանեկությունը նրանց թվում է անամպ և առանց խնդիրների, այսինքն՝ իդեալական ժամանակաշրջան, որտեղ ամեն ինչ հեշտ է: Իսկ այն, ինչ կարևոր է ծնողների համար, երեխային բուլդոզի չի հուզում:

Մեծերը և երեխաները հաճախ տարաձայնություններ են ունենում մասնագիտության, ընկերների ընտրության, երաժշտության և այլ հարցերի շուրջ: Եվ սա պատահական չէ. ծնողները մեծացել են այլ պայմաններում: Երեխաներն իրենց ոչ ճիշտ են դրսևորում: Նրանք մտածում են, որ իրենց ծնողները մարդիկ են՝ իրենց դարն ապրած, հետամնաց գաղափարների տեր: Եվ ինքնաբերաբար մեծահասակը դառնում է «մեխանիզմ», որը կամ ապահովում է պահանջմունքը կամ էլ սահմանափակում է ազատությունը: Արդյունքում խափանվում է շփումը, և վերանում է փոխադարձ հարգանքը: Կատուցվում են պատնեշներ, և կատարվում են «հեղափոխական» գործողություններ, որոնք ոչ մի կողմի համար հաճելի չեն: Մեկը պետք է կատարի հաշտության առաջին քայլը: Մեծամասամբ այն կատարում է ծնողը, քանի որ նա փորձ ունի, հմուտ է և իմաստուն: Մեծահասակները պետք է հիշեն, որ դեռահասները փորձում են ծնողի մեջ տեսնել ընկերոջը, որը կօգնի լուծել ինքնագիտակցման և կայացման գործում առաջացած խնդիրները: Բնքնուրույն քայլ կատարելը դժվար է, հետևաբար նրանք կանգնում են անելանելի վիճակի առջև: Տղայի կամ աղջկա համար երբեմն ավելի հեշտ է խոսել իր խնդիրների մասին մեծահասակների, քան թե հասակակիցնրի հետ: Երբ ընտանիքում չկա զգայական լարվածություն, երեխան ծնողին հեշտ է ներկայացնում իր անօգնական, թույլ, անպաշտպան վիճակը: Լարվածության առկայության դեպքում բախումն անխուսափելի է:

Ծնողներին կոչ ենք անում.

1. Մի՛ ակնկալեք, որ Ձեր երեխան լինի այնպիսին, ինչպիսին Դուք եք կամ ինչպիսին Դուք եք ցանկանում: Դաստիարակությունը պետք է օգնի, որ նա դառնա ոչ թե Ձեզ նման, այլ ինքն իր նման:
2. Թու՛յլ տվեք, որ իր արարքի բացատրությունը երեխան տա մինչև վերջ: Մի՛ ընդհատեք նրան. խոսքն ավարտելուց հետո միայն բացատրե՛ք նրա

արարքի սխալ և ճիշտ կողմերը:

3. Մի՛ պահանջեք երեխայից փոխհատուցում Ձեր բոլոր արածների համար:
4. Լրջությամբ ընդունե՛ք երեխայի ասածները և արածները:
5. Երեխային հնարավորություն՝ ու տվեք ինքնուրույն որոշումներ կայացնելու և պատասխանատվություն կրելու իր կատարած արարքների համար: Երեխային իր վարքն ինքնուրույն ուղղելու հնարավորություն տվեք:
6. Մի՛ մտահոգվեք այն բանի համար, որ չեք կարողանում ամեն ինչ անել Ձեր երեխայի համար, այլ մտահոգվե՛ք, երբ կարողանում եք ու չեք անում:
7. Երեխային պատժելիս միշտ հիշե՛ք, որ Դուք էլ եք եղել նրա տարիքում:
8. Մի՛ արգելեք երեխային այս կամ այն կերպ վարվել, եթե դա ուղղակի Ձեր ցանկությունն է և այլ բացատրություն չունի:
9. Մի՛ պարտադրեք և մի՛ սպասեք, որ երեխան պատմի իր հետ կատարվող բոլոր իրադարձությունների մասին. հիշե՛ք, որ նա ունի իր անձնական կյանքը՝ կազմված իր համար թանկ իրադարձություններից և իրերից (եթե դրանք իրեն կամ ուրիշներին չեն վնասում):
10. Երեխային մասնակից դարձրեք ընտանեկան ժողովներին և իր կարծիքն արտահայտելու հնարավորություն տվեք. դա նրա մոտ ինքնավստահության և օգտակարության զգացում է առաջ բերում:

Հետազոտության անցկացման համար ընտրվել են պետական կարգավիճակ ունեցող թիվ 1, 21, 10, 24 հանրակրթական դպրոցները, «Օրբան», «Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցություն» հասարակական կազմակերպությունները:

Անձի հոգեբանական վիճակի ախտորոշման մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նախագծային մեթոդիկաները, որոնցում անձի վիճակի գնահատումը հիմնված է ոչ թե գործունեության ընթացքի բնութագրման, այլ թեստային առաջադրանքների արդյունքների վերլուծության վրա: Արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ երեխաների 50%-ն ունի ներընտանեկան շփման կարիք, քանի որ բացակայում է ծնող-երեխա փոխադարձ կապը: Ստացված տվյալներից եզրակացնում ենք, որ ընտանիքի ապահովվածությունը կախված է ոչ թե նրա կառուցվածքից, այլ ներընտանեկան հարաբերությունների ձևերից և ոճերից:

Կիրառված մեթոդիկաներն ու մեթոդներն են.

- Հարցաշար ծնողների համար՝ «Ծնողական փոխհարաբերությունների վերլուծություն»:
- «Հարցարան ծնողների համար», «Հոգատարության չափը», որոնց նպատակը դաստիարակության գործընթացում ծնող-երեխա փոխհարաբերության խախտումների վիճակի, այդ իրավիճակների հոգեբանական պատճառների վերլուծությունն է:
- Հարցաշար երեխաների համար՝ «Երեխաների և ծնողների նույնականացման մեթոդիկա»:
- Սշակերտի դիտարկման քարտ ուսուցիչների համար: Տվյալ քարտը կօգնի հստակեցնել երեխայի անբարենպաստության աստիճանն ու շրջանակնե-

րը, կարող է նաև շտկման ծրագրի մշակման և դրա արդյունավետության աստիճանի հստակեցման հիմք հանդիսանալ:

- Նկարչական թեստ՝ «Իմ ընտանիքը», որի նպատակը ներընտանեկան հարաբերությունների առանձնահատկությունների բացահայտումը, այդ ամենին երեխայի աչքերով նայելն է:
- Գործնական պարապմունքներ ծնող-երեխա փոխհարաբերությունների շտկման ուղղությամբ:
- Անավարտ նախադասությունների մեթոդիկա, որը նախատեսված է դեռահաս-ծնող միջանձնային հարաբերությունների ախտորոշման համար:
- Ախտորոշման մեթոդ (դիտում, հարցազրույց, դիտարկում, հարցում, թեստավորում):
- Վարչադաստիարակչական մեթոդը իր մեջ ներառում է դերակատարողական, իրադրային խաղեր, սոցիալ-հոգեբանական թրենինգներ:

Ստացված բնութագրի հիման վրա կազմվեց պլան այդպիսի ընտանիքների հետ աշխատելու համար: Կազմակերպվեցին ժողովներ և անցկացվեցին լսումներ հետևյալ թեմաներով՝ «Գովասանք և պարսավանք», «Ծնողների և երեխաների միջև փոխհարաբերությունը», «Այցելություն դպրոց», կազմակերպվեցին անհատական խորհրդատվություններ:

Կատարած աշխատանքների արդյունքում որոշ ընտանիքներում մեղմացան ծնող-երեխա բացասական հարաբերությունները, որն էլ հիմք հանդիսացավ շարունակելու հետազոտությունները վերոգրյալ խնդրի շուրջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Возрастная и педагогическая психология: Уч. пособие для студ. высш. уч. заведений / под ред. Дубровиной, И. В., Прихожан А. М.: Изд-во Академия, 2004. — 592 с.
2. Куликова Т.А. Семейная педагогика и домашнее воспитание: Учебник для студ. пед. учеб. заведений. – 2-е издание, исправленное и дополненное. – М.: «Издательский центр «Академия», 2007 - 576 с.
3. Каптеров П.Ф. О семейном воспитании. Учебн. пособие для студ. Высш. и сред. пед. учеб. заведений. – М.: Академия, 2002 400 с.
4. Матейчек З. Родители и дети: Кн. для учителя: Пер. с чешского./ З. Матейчик - М.: Просвещение, 1992. 320 с.
5. Шакурова М. В. Методика и технология работы социального педагога: Учеб. пособие. – М.. 2007, 272 с.

Причины негативных взаимоотношений между родителями и детьми и пути их преодоления в работе социального педагога

Бежанян Седя

Резюме

Ключевые слова: *идентификация, самоуверенность, антисоциальное влияние, неблагополучность, конфликт, душевное сближение*

Существующие проблемы в функционировании семьи на современном этапе обуславливают необходимость оказания ей помощи со стороны общества. Анализ педагогической литературы, некоторые исследования показывают, что это возможно посредством организуемой с семьей социальной (или социально-педагогической) работы.

На самом деле, если семья не выполняет свою ведущую функцию – первичной базисной социализации личности ребенка – в силу разного рода причин или социальных дефицитов, деформация взаимоотношений в её подсистемах, негативное влияние референтной группы, нарушение ролевых функций и т.д.), то необходимо влияние на неё извне с определенной целью: внести необходимые коррективы в её функционирование, т.е. внести изменения.

Семья как социальный институт общества обладает большими возможностями для осуществления процесса социализации ребенка, успешность осуществления этого процесса определяется её воспитательным потенциалом.

Выполняя функции первичной социализации личности, она выступает в роли субъекта этого процесса и должна пониматься как сложная социальная система, состоящая из отдельных компонентов. Понимание семьи в качестве системы, как показало исследование, способствует повышению её воспитательного потенциала.

Проанализировано современное состояние проблемы негативных детско – родительских отношений. Можно констатировать, что данная проблема очень актуальна.

Неразвитость социальной сферы и недостаток образованных специалистов, ориентированных на проблемах семьи негативно отражается на ситуации в обществе.

Выявив виды дезадаптации ребенка, мы пришли к выводу, что причины не в структуре семьи, а в неправильном стиле семейного воспитания и нарушении типа родительно-детских отношений.

Causes of Parent-Child Negative Relationship and Means of Overcoming them in the Field of Social Pedagogies

Bezhanyan Seda

Summary

Key words: identification, self-confidence, anti-social influence, unfavorability, conflict, mental rapprochement.

The analysis of the outcomes of the present article shows that each family may face various conflicts caused by improper family relations, parental stance, environmental factors, shortcomings in parental capabilities, dissatisfaction of children's needs and unfavorable conditions.

As a social institution, the family possesses great capacities of implementing the child's socialization processes, the success of which largely depends on the educational potential. Equally, as the holder of the initial function of child socialization, the family acts as a subject in the mentioned process.

Both boys and girls feel gratitude towards the qualities of their parents which helped them comprehend their emotions and feelings, become their mentors, and solve a number of problems in the atmosphere of mutual understanding. If a certain amount of misunderstanding is present in the relationship between parents and children, then the parent's distrust towards their children and undue interference with their privacy creates a barrier between the parents and children.

The inadequacy of mutual understanding between parents and children may cause incompatibility in their characters and behavior. Oftentimes parents fail to accept the fact that their children are already teenagers, youngsters. It is more typical of girls than boys to stop sharing and ceasing to be open with their parents in case of feeling their fraudulent attitude. Children who are brought up in overprotective families and always have to follow the strict regulations and instructions of the family, being deprived of the free choice are also susceptible to behavioral deviations. No matter how hard the parents are trying to justify their overprotection by saying that they worry about their children and they know better what is good for them, such relationships cause a number of conflicts.